«ԲԱՆԲԵՐ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱԶՄԱԼԵԶՈՒ ՀԱՆԴԵՍ

*Փետրվարի 5-ին ՀՀ ԳԱԱ նախագահությունում կայացավ «*Բանբեր Հայագիտության*» հնգալեզու միջազգային գիտական հանդեսի անդրանիկ համարի շնորհանդեսը: Բացման խոսքով հանդես եկավ ԳԱԱ նա-*



խագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը*: Այնուհետև ելույթ ունեցավ հանդեսի գլխավոր խմբագիր* Պավել Չոբանյանը*:*

Հանդեսի ծնունդը շնորհավորեցին ՀՀ ԳԱԱ թղթակից անդամներ Աշոտ Մելքոնյանը, Ռուբեն Սաֆրաստյանը, Հենրիկ Հովհաննիսյանը*, բանասիրության դոկտորներ* Ավետիք Իսահակյանը *և* Անուշավան Զաքարյանը*:*

Հայագիտությունը դիտարկելով որպես հայկական պետության ազգային ու գիտական քաղաքականության գերակա ուղղություն, ՀՀ կառավարությունը հաստատել է «Հայագիտության զարգացման հայեցակարգը», «2012–2025 թթ. հայագիտական ոլորտի զարգացման ՀՀ ռազմավարությունը», ստեղծել հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամ, կազմավորել հայագիտական հետազոտությունները համակարգող միջազգային խորհուրդ, հիմնել է «Բանբեր հայագիտության» հնգալեզու միջազգային գիտական հանդես:

Մասնագիտական բազմալեզու հանդեսը խնդիր ունի նպաստելու հայագիտական կենտրոնների միջև միջազգային համագործակցության սերտացմանը, խթանելու Հայաստանի պատմության ու մշակույթի համակողմանի հետազոտությունների իրականացմանը, դիմագրավելու Հայաստանի պատմության խեղաթյուրումներին ու շահարկումներին, քննարկելու հայագիտության հետագա զարգացմանը խոչընդոտող գործոնների ու հանգամանքների հաղթահարման ուղիները, նորովի լուսաբանելու Հայաստանի պատմության հիմնահարցերը, օժանդակելու ձերբազատվել կաղապարներից և գիտական շրջանակներին ու հանրությանը ներկայացնել ճշմարտությունը:

Հատուկ կարևորություն է տրվելու Հայաստանի և տարբեր երկրների հայկական գաղթօջախների պատմությունը լուսաբանող հետազոտությունների, հարակից երկրների ժողովուրդների լեզուներով Հայաս-

տանի պատմության վերաբերյալ պահպանված սկզբնաղբյուրների աղբյուրագիտական ուսումնասիրությունների հրապարակումներին, Հայաստանում ուրույն քաղաքակրթության զարգացման գործընթացի անընդհատության ցուցադրմանը:

Հանդեսում կհրապարակվեն հայ և օտարազգի հայագետների աշխատություններ, կներկայացվեն դասական հայագիտության երախտավորների գիտական ժառանգությունն ու հայագիտական նորագույն նվաճումները, հայագիտական տարբեր կենտրոնների ձեռքբերումներն ու խնդիրները:

Գիտական հանդեսը լայնորեն բաց է լինելու բոլոր երկրների գիտնականների հայագիտական ուսումնասիրությունների համար և հրապարակելու է հայագիտության բոլոր ճյուղերը ներկայացնող հետազոտություններ: Կարևորվելու է ստացված հայագիտական աշխատությունների այլ լեզուների թարգմանությունների իրականացումը: Հանդեսը ունենալու է նաև լրատու բաժին, մատենագիտական ցանկեր:

Հանդեսը լույս կընծայվի տարեկան երեք համար պարբերականությամբ:

«Գիտություն», փետրվար, № 2, 2014 թ.